ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» Դեկտեմբերի 2026 **թվականի** N 3238-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ՓՈՂՈՑԻ N 3/1 ՀԱՍՑԵԻ 21,35 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, 47,19 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, 22,5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԸ, 158,8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՄՈՒՇԵՂ ԻԳԻԹԻ ԳԻՆՈՍՅԱՆԻՆ ԵՎ ՇԱՎԱՂԻ ՀԱԿՈԲԻ ԳԻՆՈՍՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լոմոնոսովի փողոցի N 3/1 հասցեի 158,8 (մեկ հարյուր հիսունութ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տունը, օժանդակ շինությունները և ավտոտնակները սեփականության իրավունքով պատկանում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 16092026-08-0010 վկայական):

Հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի հոկտեմբերի 14-ի N 188-Ա որոշումը և քաղաքացի Մուշեղ Իգիթի Գինոսյանի դիմումը (մուտքագրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում 2023 թվականի նոյեմբերի 27-ին N 25457 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լոմոնոսովի փողոցի N 3/1 հասցեի 21,35 (քսանմեկ ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով 148340 (մեկ հարյուր քառասունութ հազար երեք հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով բնակելի տունը, 47,19 (քառասունյոթ ամբողջ տասնինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով 218584 (երկու հարյուր տասնութ հազար հինգ հարյուր ութսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով օժանդակ շինությունները և 22,5 (քսաներկու ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով 52110 (հիսուներկու հազար մեկ հարյուր տասը) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով ավտոտնակներն ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Մուշեղ Իգիթի Գինոսյանին և Շավաղի Հակոբի Գինոսյանին, որպես ընդհանուր համատեղ սեփականություն:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լոմոնոսովի փողոցի N 3/1 հասցեի 158,8 (մեկ հարյուր հիսունութ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը օտարման պահին կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 1085239 (մեկ միլիոն ութսունհինգ հազար երկու հարյուր երեսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացիներ Մուշեղ Իգիթի Գինոսյանին և Շավաղի Հակոբի Գինոսյանին, որպես ընդհանուր համատեղ սեփականություն:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո քաղաքացիներ Մուշեղ Իգիթի Գինոսյանը և Շավաղի Հակոբի Գինոսյանը պարտավոր են 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:

4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացիներ Մուշեղ Իգիթի Գինոսյանի և Շավաղի Հակոբի Գինոսյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Մուշեղ Իգիթի Գինոսյանին և Շավաղի Հակոբի Գինոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆԱՐ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թվական, քաղաք Գյումրի